# ՀԱԽՎԵՐԻՍԻ ԽՈՍՎԱԾՔԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԼԻԶԱ ԲԱԲԱՅԱՆ

## *1. ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ*

*Իջևանի շրջանի Հախվերիս գյուղի խոսվածքում առկա են հետևյալ ձայնավոր հնչյունները՝* ա, ա̈, օ, ու, է, ի, ը *և* ո (ուօ) *երկբարբառը։* Ա, օ, ու, է, ի, ը *ձայնավորներն իրենց արտասանությամբ չեն տարբերվում ժամանակակից գրական հայերենի համապատասխան հնչյուններից։ Խոսվածքում* ա *ձայնավորին զուգահեռ գոյություն ունի նաև քմային* ա̈, *որը հիմնականում հանդես է գալիս բառամիջում. ինչպես՝ ժանգ>*ժա̈նգ, *ձախ>*ձա̈խ, *վախ>*վա̈խ, *բաժանել>*բ'ա̈ժնէլ, *դանակ>*դ'ա̈նագ, *հազար>*հա̈զար, *աշօլ>*ա̈շալ, *շաբիկ>*շա̈րիք, *զարդարել>*զա̈րդըրէլ *և այլն։ Սակայն* ա*-ն ավելի հաճախ է գործածվում, քան* ա̈*-ն։*

*Սովորական* ա*-ն և քմային* ա̈*-ն խոսվածքում իմաստային հակադրություններ չունեն, ուրեմն և առանձին հնչույթներ համարվել չեն կարող. քմային* ա̈*-ն* ա *հնչույթի արտասանական տարբերակն է միայն։*

Ո *երկբարբառը մոտավորապես ունի* ուօ *արտասանություն. ինչպես՝ փոր>*փուօր *(փուօր), փող>*փուօղ *(փուօղ), խոռ>*խուօռ *(խուօռ), փորձանք>*փուօրձանք *(փուօրձանք), ձոր>*ձ'ուօր *(ձուօր), գործ>*գ'ուօրծ *(գուօրծ))։*

Ո *երկբարբառը հանդիպում է միայն բառամիջում, անկախ շեշտի դիրքից։ Խոսվածքի շեշտն ընկնում է բառի վերջին վանկի ձայնավորի վրա. ինչպես՝* ամա՛ն, ասէ՛լ, բ'արէգա՛մ, ասկագա՛ն, թունդի՛ր, կարդիգո՛ս, խոստանա՛լ, ծառօ՛գ, գ'ըրէ՛լ, գ'ընա՛լ, շըլգ՛է՛լ, ծըթնէ՛լ, նըգա՛ր, հըբա՛ող, գ'ընդա՛գ, դ'ըմա՛գ *և այլն։*

*Հախվերիսի խոսվածքում առկա են հետևյալ բաղաձայն հնչյունները.*

Եռաշարք

| *շնչեղ ձայնեղ* | *խուլ* | *շնչեղ խուլ* |
|---|---|---|
| *բ՛ (բ)* | *պ* | *փ* |
| *գ՛ (գ, գ՛)* | *կ, կ՛* | *ք, ք՛* |
| *դ՛ (դ)* | *տ* | *թ* |
| *ձ՛ (ձ)* | *ծ* | *ց* |
| *ջ՛ (ջ)* | *ճ* | *չ* |

Երկշարք

| *ձայնեղ* | *խուլ* |
|---|---|
| *զ* | *ս* |
| *ժ* | *շ* |
| *վ* | *ֆ* |
| *ղ, ղ՛* | *խ* |
| *հ՛* | *հ* |

Միաշարք

*լ*
*ր*
*ռ*
*մ*
*ն*

Խոսվածքի բաղաձայնական համակարգը ժամանակակից հայերենի բաղաձայնական համակարգից որոշ չափով տարբերվում է։ Բ, գ. դ. ձ. ջ հնչյուններին զուգահեռ գոյություն ունեն բ', գ', դ', ձ', ջ' շնչեղ ձայնեղ հնչյունները՝ բառասկզբի դիրքում։ Պ, կ, ք հնչյունները գ. կ. ք հնչույթների դիրքային տարբերակներն են է և ի առաջնալեզվային ձայնավորներից առաջ։ Խոսվածքում չկան բառեր, որոնք իմաստաբանորեն տարբերվեն գ. կ. ք. և գ', կ', ք հնչույթների հակադրությամբ։

Հախվերիսի խոսվածքում, բացի սովորական խուլ հ հնչյունից, կա նաև ձայնեղ ռ' հագագը, որը հանդիպում է միայն բառասկզբում՝ ձայնավորով սկսվող մի շարք բառերում։

Բառամիջի և բառավերջի դիրքում ղ հնչյունը արտասանվում է այնպես, ինչպես ժամանակակից հայերենում է, իսկ բառասկզբի ղ'-ն հակվում է դեպի կոկորդը և հագագային երանգ է ստանում։ Բառասկզբում ղ' հանդիպում է միայն օտար բառերում։

## 2. ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ա) ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ա ձայնավորը միավանկ և երկվանկ բառերում չի հնչյունափոխվում. ինչպես՝ աղ>աղ. աչք>հ'աչկ. արջ>հ'աղչ, աման>աման. գարուն>գ'արուն. առու>հ'առու, ամառ>ամառ: Սակայն իբրև բացառություն ունենք՝ յանկել>յըգ'կել, համար>հըմար:

Երկվանկ բառերի վերջին վանկի ա ձայնավորը բառի անձան դեպքում հնչյունափոխվում է ը-ի կամ սղվում է. ինչպես՝ ճագար>ճագըր. բ'անյար>բ'անըրի. աշխար>հ'աշխըրք'ի, անգաճ>հ'անգըճի. շլագ>շըլգ'ի:

Եռավանկ բառերի միջնավանկի ա ձայնավորը մի շարք բառերում ընկնում է. ինչպես՝ մատանի>մադնիք, հարսանիք>հարսնիք, բաժանել>բ'աժնել. շալակել>շըլգ'ել, պակասել>պագսել, թաթախել>թաթխել:

Մի շարք եռավանկ բառերում միջնավանկի ա ձայնավորը չի հնչյունափոխվում. ինչպես՝ ազատել>ազադել, ամաչել>ամանչել. աշխատել>աշխադել. բամբասել>բ'ամբասել. դաղթական>գ'աղթագան. քարանալ>քարանալ. լողանալ>լողանալ, զարմանալ>զարմանալ և այլն։

Ա ձայնավորը բառավերջի բաց վանկում ի հոլովանիշից առաջ սղվում է. ինչպես՝ փեսա>փէսի, ճամփա>ճամփի, սաղանա>սաղանի, տըղա>տըղի, ագռա>ագռի:

Մասնակի հնչյունական փոփոխություն է ա>է—արժան>էժան, միջնակ>միջնէգ:

Գրաբարյան ե ձայնավորը կրել է հետևյալ փոփոխությունները։

Միավանկ բառերի սկզբի ե-ն դառնում է յէ. ինչպես՝ եզն>յէզ. ես>յէս. երբ>յէփ. երգ>յէրք:

Երկվանկ և բազմավանկ բառերի սկզբի ե-ն դառնում է է. ինչպես՝ երազ>էրազ, երամ>էրամ, երինջ>էրինջ, երկաթ>էրգաթ. երկու>էրգու, երախայ>էրխա, երկանք>էրգանք: Բացառություն են՝ երդումն>յէրթըմ, երկայն>յէրգ'ան: Եղբայր բառը խոսվածքում ունի ախպէր ձևը, որը գալիս է աղբայր նախաձևից։

Բառամիջում և բառավերջում ե-ն արտասանվում է մաքուր է. ինչպես՝

*կանեփ*>կանէփ. *սեք*>սէս, *սկեսրայր*>կ՛էսրար, *մ[illegible]*>մէխկ. *մժեղ*>մրժէխ. *ծեփ*>ծէփ. *թեփ*>թէփ, *կապերտ*>կարրէղ, *տրեխ*>տրրէխ. *ցեց*>ցէց.

*Մասնակի փոփոխություններ են.*

Ե>ը—*ածելի*>առծըլի. *ճեղքել*>ճըղ՛էլ. *վերայ*>վըրէն. *Ելանել*>ն՛ըլնէլ:

Ե>ի—*կերակուր*>կ՛իրագուլ, *երեկոյ*>ի՛իրգուն, *լեզու*>լիզու, *խեժ*>խիժ. *երեք*>իրէք:

Ե>ու—*ուղեղ*>ղուղ:

Ե>Ø—*հայելի*>հայլի. *երեխայ*>էրխա. *եղունգն*>ղ՛ունգ:

Գրաբարյան է հնչյունը խոսվածքում դառնում է է. ինչպես՝ *էգ*>էգ, *էշ*>էշ. *դէզ*>դ՛էզ, *դէմ*>դ՛էմ, *կէս*>կ՛էս, *ձէթ*>ձ՛էթ. *չէկ*>չէգ. *տէր*>տէր. *սէր*>սէր.

Կիսակէ ձևի դիմաց խոսվածքն ունի գ՛իրագ՛ի ձևը:

Գրաբարյան է-ից առաջացած է ձայնավորը բառի աճման դեպքում հնչյունափոխվում է ի-ի. ինչպես՝ *դէզ*>դ՛էզ>դ՛իզի. *կէս*>կ՛էս>կ՛իսու. *տէր*>տէր>տիրոջ. *ձէթ*>ձ՛էթ>ձ՛իթի:

Բառի աճման դեպքում մի երկու բառի մեջ հանդես է գալիս նաև է>ը հնչյունափոխությունը. ինչպես՝ *մէջ*>մէչ>մըչի. *մէջք*>մէչկ>մըչկի:

Բառավերջում է ձայնավորը հանդես է գալիս միայն բէ բառում.

Ի ձայնավորը հիմնականում փոփոխություններ չի կրում. ինչպես՝ *ինն*>ինը, *ինչ*>ինչ. *իշխան*>իշխան, *գինի*>գ՛ինի, *թշնամի*>թըշնամի, *ջորի*>ջ՛որի. *քամի*>քամի. *լինդ*>լինդ և այլն: Սակայն, ինչպես ժամանակակից հայերենում, այստեղ ևս բառի աճման դեպքում ի-ն վերածվում է ը-ի. ինչպես *սիրտ*>սըրդի. *տիգ*>տըգ՛ի, *կիր*>կըրի:

*Մասնակի փոփոխություններ են.*

Ի>ը—*գիշեր*>գըշէր:

Ի>է—*ծիրտ*>ծէրդ:

Գրաբարյան ու ձայնավորին խոսվածքում, որպես կանոն, համապատասխանում է ու. ինչպես՝ *ուլ*>ուլ, *ուտել*>ուդէլ, *ունենալ*>ունէնալ. *ուզել*>ուզէլ. *ջուր*>ջուր. *սունկ*>սունգ, *ձուկն*>ձ՛ուգ. *մուկն*>մուգ, *կատու*>կադու, *երկու*>էրգու:

Որոշ բառերի մեջ նկատվում է ու-ը հնչյունափոխությունը. ինչպես *ուխտավոր*>ըխտավոր. *անուն*>անըմ, *բունկալ*>բ՛ընգալ. *բուսանել*>բ՛ըսնէլ, *դդում*>դ՛ըդըմ. *երդումն*>յէրդըմ:

Ու>ը հնչյունափոխությունն առկա է նաև բառի աճման դեպքում. այսպես՝ *թուփ*>թըփի. *թութ*>թըթի. *թուզ*>թըզի. *ծուխ*>ծըխի. *մուխ*>մըխի, *թուր*>թըրի. *կուռ*>կըռի. *ցուրտ*>ցըրդի:

*Մասնակի փոփոխություններ են.*

Ու>ո—*կակուղ*>կագող:

Ու>Ø—*ուղեղ*>ղ՛ուղ, *ուղարկել*>ղ՛րգ՛էլ:

Ո ձայնավորը բառասկզբում դառնում է վո. ինչպես՝ *ոտն*>վոդ, *որ*>վոր. *որբ*>վորփ, *որդն*>վորթ. *որձ*>վորց, *ոչխար*>վոչխար. *ոսկի*>վոսկ՛ի:

*Օղորմի*>օղորմի. *ողորմածիկ*>օղորմածիգ, *ոսկոր*>օսկոռ. *որձկալ*>օրձգալ բառերում բառասկզբում նկատվում է ո>օ փոփոխությունը:

Բառամիջում ո-ն, որպես կանոն, դառնում է ուօ երկբարբառ. ինչպես՝ բողկ>բ՛ոխկ, բոց>բ՛ոց, [illegible], գող>կ՛ող, գորտ>գ՛ոռդ, թոռն>թռռ, յակոտ>յա՛գոդ, խարտոց>խառդոց, խմոր>խըմոր, խնձոր>խընձոր, ծոց>ծոց, հոտ>ֆոդ և այլն։ Սակայն բառամիջում կատարվում է նաև ո>օ փոփոխությունը. ինչպես՝ առողջ>առօյուշ, գոմէշ>գ՛օմէշ, գովել>գ՛օվալ, ծաղով>ծօղօվ, խոստանալ>խօստանալ, ծով>ծօվ, կով>կօվ, հով>հօվ, սով>սօվ, գրող>գ՛րօղ, քնող>քընօղ, ուտող>ուդօղ, երգող>յէրգօղ և այլն։ Ո-ն օ է դառնում մեծ մասամբ վ շփական հնչյունից առաջ և ենթակայական դերբայի ող մասնիկում։

Մասնակի փոփոխություններ են.

Ո>ու—թոնիր>թունդիր։

Ո>ը—ոլորել>օլըրէլ։

Ո>ա—որոճ>առօջ։

ո>∅—կաթողիկոս>կաթղիգօս, ողողել>օղղէլ, օրորոց>օրրոց։

Ը ձայնավորը բառասկզբում ունի սահմանափակ կիրառություն։ Խոսվածքն ը-ով սկսվող միավանկ բառ չունի, իսկ բազմավանկ բառերից նշենք միայն երկուսը, որոնց համապատասխան ձևերն ունեն նախահնչյուն բ։ Դրանք են՝ ընկեր>ընգա՛էր և ընտրել>բընդըրէլ։ Նշված երկու օրինակում էլ բառասկզբի ը-ն մնում է անփոփոխ, բայց դրանից առաջ ավելանում է ւ հնչյունը։

Ից բաղաձայնների միջև լսվող, բայց չգրվող ը-ն խոսվածքում պահպանվում է այնպես, ինչպես գրական հայերենում. օրինակ՝ գրել>գ՛ըրէլ, դմակ>դ՛ըմագ, մտկտալ>մըխկըդալ, քրքրել>քըրքըրէլ, գնալ>գ՛ընալ, գնդակ>գ՛ընդագ։ Բառամիջում ը-ն հանդես է գալիս իբրև գաղտնավանկ, իսկ բառավերջում՝ իբրև որոշիչ հոդ։

## Բ) ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Հախվերիսի խոսվածքում գրաբարյան երկբարբառների դիմաց հանդես են գալիս պարզ ձայնավորներ։

Բաղաձայններից առաջ այ երկբարբառը դառնում է է. ինչպես այս>էս, այդ>էդ, այն>էն, այծ>էծ, այրել>էրէլ, լայն>լէն, ծայր>ծէր, հայր>հէր և այլն։

Մի քանի բառերի մեջ այ-ը մնում է նույնությամբ. ինչպես՝ կայծակ>կայձագ, պայծառ>պայծառ, վայրենի>վայրէնի, հայրիկ>հայրիգ։ Դրանք, ամենայն հավանականությամբ, գրական փոխառություններ են։

Բառավերջում այ երկբարբառի յ բաղադրիչն ընկնում է. ինչպես ակռայ>ագռա, բակլայ>բ՛ագլա, երախայ>էրխա, ծառայ>ծառա, սատանայ>սադանա, տղայ>տըղա։

Միավանկ բառերում բառավերջի այ-ը մնում է անփոփոխ. ինչպես՝ հայ>հայ, վայ>վայ։

Հախվերիսի խոսվածքում գրաբարյան աւ երկբարբառին, բաղաձայնից առաջ, ինչպես մյուս բոլոր բարբառներում, համապատասխանում է օ պարզ ձայնավորը. ինչպես՝ աւգուտ>օքուդ, աւգնել>օքնէլ, աւծել>օծէլ, աւձ>օձ, աւղ>օղ, աղաւթել>աղօթէլ, ամաւթ>ամօթ, ծանաւթ>ծանօթ։

Մասնակի փոփոխություններ են.

Աւ>ու—աղաւնի>աղունիգ, յօնք>ունք։

Աւ>ի—մաւրուք>միրուք:

Աւ>աֆ—նաւթ>նաֆթ:

Աւ>ո—մաւտ>մոդ:

Եա երկբարբառին խոսվածքում համապատասխանում է է պարզ ձայնավորը. ինչպես՝ լեառն>լէռ, լեարդ>լէրդ, կորեակ>կորէգ, սեաւ>սէվ, ցորեան>ցօրէն, վառեակ>վառէգ և այլն։

Գրաբարյան անցյալ դերբայի եալ վերջավորությունը Հախվերիսի խոսվածքում դարձել է էլ. ինչպես՝ առեալ>առ'էլ, սիրեալ>սիրէլ, կատարեալ>կադարէլ և այլն։ Հրամայական եղանակի եա-ն դարձել է ի՝ գրեա>[illegible]:

Եւ երկբարբառը խոսվածքում դառնում է է, ինչպես՝ դեւղ>դ'էղ, յեղւ>յէղ:

Իւ երկբարբառը բաղաձայնից առաջ ներկայանում է ու պարզ ձայնավորով. ինչպես՝ ալիւր>ալուր, արիւն>առուն, հարիւր>հարուր, ձիւն>ձ'ուն, սիւն>ս'ուն, ձիւթ>ձ'ութ, աղբիւր>ախպուր:

Ութիւն ածանցի իւ երկբարբառի դիմաց խոսվածքը ներկայացնում է է. ինչպես՝ եղբայրութիւն>ախպէրութէն, նեղութիւն>նէղութէն, ուրախութիւն>ուրախութէն, չորութիւն>չօրութէն և այլն։

Ոյ երկբարբառը փակ վանկում հնչյունափոխվում է ու-ի. ինչպես՝ բոյթ>բ'ութ, թոյլ>թուլ, լոյս>լուս, ճկոյթ>ճըգութ, կապոյտ>կաբուդ, քոյր>ք'ուր, արտոյտ>արդուդ, անոյշ>անուշ և այլն։

գ) ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ձայնեղ պայթականներ

Հին հայերենի ձայնեղ պայթական հնչյունները, ինչպես արդեն նշել ենք, բառասկզբում ունեն շնչեղ ձայնեղ արտասանություն։ Այսպես՝

բ>բ'—բարձ>բ'արձ, բամբակ>բ'ամբագ, բարակ>բ'արագ, բուրդ>բ'ուրդ.

գ>գ'—գանգատ>գ'անգադ, գարի>գ'արի, գգել>գ'ըգել, գլուխ>գ'ըլուխ.

դ>դ'—դաղձ>դ'աղձ, դաս>դ'աս, դատ>դ'ադ, դարբին>դ'արփին, դեղին>դ'էղին.

ձ>ձ'—ձախ>ձ'ախ, ձայն>ձ'էն, ձավար>ձ'ավար, ձուկ>ձ'ուգ, ձմեռ>ձ'ըմէռ.

ջ>ջ'—ջարդել>ջ'արդել, ջնջել>ջ'ընջել, ջոկել>ջ'ոկ'էլ, ջորի>ջ'օրի, ջուր>ջ'ուր:

Բառասկզբում բ>փ փոփոխություններ են երևան հանում բրդել>փըրթել, բուրուառ>փուրվառ բառերը։

Բ-ն փ է դառնում միջձայնավորային դիրքում և ր-ից հետո. ինչպես՝ արբենալ>հարփել, դարբին>դ'արփին, երբ>յէփ, խաբել>խափել, շաբաթ>շափ'աթ, որբ>վորփ, ուրբաթ>ուրփաթ, սուրբ>սուրփ, սրբել>սըրփել և այլն։

Ղբ հնչյունակապակցությունը դառնում է խպ. ինչպես՝ աղբիւր>ախ'պուր, եղբայր>ախպէր:

Բարբառում գ>f հնչյունափոխություն է կատարվում միջձայնավորային ու նոձայնավորային դիրքում և ր-ից հետո. ինչպես՝ ագանիլ>հաfնել, թագավոր>թաfավոր, կարագ>կարաf, ձագ>ձ՛աf, օգնել>օ ըfյել, ճրագ>ճըրաf, մարագ>մարաf, պատարագ>պատարաf, սուգ>սուf, կարգ>կարf, երգ>յէրf:

Զգ հնչյունակապակցության մեջ երկու բաղաձայններն էլ խլանում են. ինչպես՝ ազգ>ասկ, ազգական>ասկագան, անզգամ>անըսկամ:

Գ-ն գ՛ է դառնում է և ի ձայնավորներին նախորդող դիրքում. ինչպես՝ գեղին>գ՛էղին, գերան>գ՛էրան, գինի>գ՛ինի, գեղ>գ՛էղ, անգետ>անգ՛իտ, երկար>յէրգ՛էն:

Մասնակի դեպք է գ-ի քմայնացումը ու ձայնավորից առաջ՝ գուլպայ>սուլբա բառում:

Գիշեր>fըշէր, գցել>fըցէլ, գտնել>fըթնէլ, գդալ>fըթալ բառերում գ-ն շնչեղ խուլ է դարձել:

Բառամիջում և բառավերջում նկատվում է դ-ի շնչեղ խլացում՝ դ>թ—դադար>դ՛աթար, բերդ>բ՛էրթ, բուրդ>բ՛ուրթ. բրդել>փըրթէլ, դդում>դ՛ըթում, լեարդ>լէրթ. կարդալ>կարթալ. մարդ>մարթ. որդ>վորթ. ջարդել>ջ՛արթէլ:

Մասնակի դեպք է դ>թ հնչյունափոխությունը ն ձայնորդից հետո. ինչպես՝ բարեկենդան>բ՛արիկ՛էնթան, խնդրել>խընթըրէլ. նաև՝ դ>ձ—փոխինդ>փոխինձ:

Ղդ հնչյունախումբը դառնում է խտ՝ խեղդել>խէխտէլ:

Բառամիջի և բառավերջի դիրքում նկատվում է ձ-ի շնչեղ խլացում՝ ձ>ց—բարձ>բ՛արց, բարձր>բ՛արցըր, խուրձ>խուրց. որձ>վորց. փորձ>փորց. փորձանք>փորցանք, դաղձ>դ՛ախց, օձ>օց:

Մասնակի դեպք է՝ ձ>ս—վարձք>վարսկ:

Բառամիջի և բառավերջի դիրքերում նկատվում է ջ-ի շնչեղ խլացում՝ ջ>չ—աղջիկ>ախչիգ. առաջ>հ՛առաչ, առաջնակ>հ՛առաչինէգ. առողջ>առոխչ, արջ>հ՛արչ, թրջել>թըրչէլ, մէջք>մէշկ: Մէջք>մէշկ բառում կատարվել է չ>շ փոփոխությունը:

Մասնակի դեպք է ջ>ճ—ականջ>անգաճ:

Ռնգայիններին հաջորդելիս բ, գ, դ, ձ, ջ հնչյունները բառամիջում և բառավերջում մնում են անփոփոխ. օրինակ՝ ամբար>ամբար, բամբակ>բ՛ամբագ, բամբասել>բ՛ամբասէլ, սմբուլ>սըմբուլ, գանգատ>գ՛անգադ, եղունգ>յէղունգ, զանգ>զանգ, ժառանգ>ժառանգ. հինգ>հինգ. գունդ>գ՛ունդ, թունդ>թունդ, լինդ>լինդ, հիվանդ>հիվանդ. մարմանդ>մարմանդ. սանդ>սանդ. քանդել>fանդէլ, բրինձ>բ՛րինձ, խանձել>խանձէլ. հունձ>հունձ. բանջար>բ՛անջար, երինջ>էրինջ, մունջ>մունջ, ջնջել>ջ՛ընջէլ և այլն:

Խուլ պայթականներ

Պ, կ, տ, ծ, ճ խուլ պայթական հնչյունները բառասկզբում մնում են անփոփոխ և չեն տարբերվում ժամանակակից հայերենի համապատասխան հնչյուններից: Օրինակ՝

պ>պ—պատ>պադ, պապ>պաբ. պարապ>պարաբ, պահել>պահէլ. պանիր>պանիր.

կ>կ—կապ>կաբ, կախ>կախ. կատու>կադու. կին>կընիգ. կանեփ>կանէփ, կարկատել>կարգըդէլ. կայծակ>կայձագ, կորեակ>կորէգ:

Տ>տ—տուն>տուն. տալ>տոլ, տակ>տագ, տախտակ>տախտագ, տափակ>տափագ:

Ծ>ծ—ծակ>ծագ. ծամել>ծամէլ, ծամոն>ծամոն, ծակել>ծագ՛էլ, ծածկել>ծասկ՛էլ. ծանր>ծանըր:

Ճ>ճ—ճաշ>ճաշ, ճուտ>ճուդ, ճանկել>ճանգ՛ել, ճիպոտ>ճիբոդ. ճանաչել>ճանանչէլ, ճակատ>ճագադ:

Պ, կ, տ, ծ, ճ խուլ պայթականները բառամիջում և բառավերջի ետձայնավորային դիրքում սովորաբար վերածվում են ձայնեղների. ինչպես՝

Պ>բ—պապ>պաբ, պապանձել>պաբանձէլ, պարապ>պարաբ, կարիկ>կարիգ. արպել>աբէլ, կապ>կաբ:

Կ>գ—կոճակ>կօջագ, կոբեակ>կոբէգ, բարակ>բ՛արագ. երկու>էրգու, լակել>լըգ՛էլ. ճակատ>ճագադ. կակղել>կագղէլ. պակասել>պագսէլ. տափակ>տափագ. տնկել>տընգ՛էլ:

Կ>կ՛—է և ի ձայնավոր հնչյուններից առաջ՝ կէս>կ՛էս, կիսել>կ՛իսէլ, ոսկի>վոսկ՛ի. կէսօր>կ՛էսօր:

Մասնակի դեպքեր են՝

Կ>ք—կշռել>քըշըռէլ. կշեռք>քըշէռք. շապիկ>շաբիք:

Տ>դ—ատամն>ադամ. արտ>հ՛արդ. արատ>արօդ. խոտ>խոդ, խրատ>խըրադ. կատու>կադու. կարկատ>կարգադ, կտոր>կըդոր, ճատ>ճադ. հավատ>հավադ:

Ս խուլ շփականից հետո տ-ն չի ձայնեղանում, ինչպես՝ աստուած>աստված. աստուածածին>աստվածածին, ապրուստ>աբրուստ, իմաստուն>իմաստուն, հաստ>հաստ. աստառ>աստառ, դաստաստան>դ՛աստաստան:

## Ձայնեղ շփականներ

Զ, ժ, ղ, վ ձայնեղ շփականները խոսվածքում, որպես կանոն, մնում են անփոփոխ, չեն հնչյունափոխվում և համապատասխանում են ժամանակակից հայերենի նույն բաղաձայններին։ Այսպես.

Զ>զ—զանգ>զանգ, ազատ>ազադ, հազար>հազար, աւազ>ավազ, զազրել>զ՛ազազէլ. զատիկ>զադիգ:

Զդ հնչյունակապակցության մեջ զ-ն խլանում և դառնում է ս. օրինակ՝ ազգ>ասկ, ազգական>ասկագան, անզգամ>անըսկամ:

Ժ>ժ—ժանգ>ժանգ. ժամ>ժամ, բաժին>բ՛աժին, պատիժ>պադիժ:

Վ>վ—վանք>վանք, վառեակ>վառէգ, վօղ>վէգ, սով>սօվ, կով>կով:

Ինչպես նշվել է, խոսվածքում ղ՛ հանդիպում է օտար բառերի բառասկզբի դ-ի փոխարեն. օրինակ՝ դազ>դ՛ազ. դազան>դ՛ազան. դասար>դ՛ասար, դավուլմա>դ՛ավուլմա, դափաղ>դ՛ափաղ, դայիշ>դ՛այիշ:

Միջձայնավորային դիրքում ղ-ն արտասանվում է ժամանակակից գրական հայերենի ետնալեզվային ձայնեղ շփական ղ-ի նման՝ աղալ>աղալ, խաղալ>խաղալ, ծիծաղել>ծըծաղալ:

Ղ>խ հնչյունափոխությունն է կատարվում պայթական խուլից կամ շնչեղ խուլից առաջ. ինչպես՝ խեղճ>հէխճ, մեղք>մէխք, կեղտ>կ՛էխտ. պղտոր>պըխտոր, քաղաք>քաղաք, բայց՝ քախկի, ծաղիկ>ծաղիգ. բայց ծախիգի և այլն։

## Խուլ շփականներ

Ս, շ, խ, հ խուլ շփականները խոսվածքում, որպես կանոն, համապատասխանում են հայերենի նույն հնչյուններին՝ բառի մեջ դրված բոլոր դիրքերում. ինչպես՝

Ս>ս—սայլ>սէլ, սանդ>սանդ, սար>սար, ասել>ասէլ, աստուած>ասարված:

Շ>շ—շապիկ>շարիՙ, շատ>շադ, շէկ>շէգ, գիշեր>Գըշէր, գէշ>գ՚էշ:

Խ>խ—խաբել>խափէլ, խալ>խալ, խոտ>խոդ, բախտ>բ՚ախտ, խախտել>խախտէլ:

Հ>հ—հավ>հավ, հաց>հաց, մահ>մահ, շնորհավոր>շընհավոր:

Նշելի են հետևյալ փոփոխությունները.

Խ>հ—տեղի է ունենում, երբ բառի մեջ հաջորդ բաղաձայնը ղ է (տարնմանություն). ինչպես՝ խաղ>հաղ, խաղալ>հաղալ, խաղացուցանել>հաղորէլ. խաղող>հավող, խեղդել>հէխտէլ. խեղճ>հէխճ:

Բառասկզբի հո հնչյունակապակցության դիմաց ունենք ֆօ, ինչպես՝ հոգի>ֆոՙի, հող>ֆող, հոտ>ֆոդ, հոտել>ֆոդէլ. հոր>ֆոր. հորթ>ֆորթ:

Հ-ն ընկնում է ր ձայնորդից հետո՝ խոնարհ>խօնար, աշխարհ>աշխար, շնորհք>շնորՙ, նաև՝ պահք>պաս, բաղհան>Բախան բառերում:

Այս խոսվածքի համար, ինչպես արդեն նշել ենք, հատկանշական է հ՛-ի հավելում ձայնավորով սկսվող մի շարք բառերում. ինչպես՝ արջ>հ՛առճ. առու>հ՛առու. երեկոյ>հ՛իրգուն. իջեցուցանել>հ՛իջըցընէլ, ելանել>հ՛ըլնէլ. աղբիւր>հ՛ախպուր, այգուց>հ՛էՙուց, երես>հ՛էրէս:

Կասկած>կածկած, կասկածել>կածկածէլ, շրջան>սրօջան, շունչ>սունճ. շնչել>սընճէլ բառերում ս-ի դիմաց ծ է, իսկ շ-ի դիմաց ս՝ վերջին դեպքում տարնմանությամբ:

## Ձայնորդներ

Ձայնորդ լ, մ, յ, ն, ռ, ր հնչյունները Հախվերիսի խոսվածքում ընդհանուր առմամբ անփոփոխ են. ինչպես՝

Լ>լ—լայն>լէն, լուանալ>լըվանալ, գլուխ>գ՚ըլոխ, գայլ>գ՚էլ:

Մ>մ—մազ>մազ, մաղ>մաղ, աման>աման, նամակ>նամագ, ժամ>ժամ:

Ն>ն—նամակ>նամագ, նշան>նըշան, նուռ>նուռ, գունդ>գ՚ունդ, խանգարել>խանգարէլ:

Ռ>ռ—խառնել>խառնէլ, մեռնել>մէռնէլ:

Ր>ր—մանր>մանըր, ծանր>ծանըր, կարել>կարէլ, քերել>Քէրէլ, կրել>կըրէլ:

Գրաբարյան բաղաձայնահաջորդ ն վերջնահնչյուն ունեցող բառերը խոսվածքում ն-ն կորուստ ունեն. ինչպես՝ մուկն>մուգ, լեառն>լէռ, բեռն>բ՚էռ, գառն>գ՚առ, հարսն>հարս, ձուկն>ձ՚ուգ:

Ն>մ է դառնում բ և մ շրթնային բաղաձայններից առաջ՝ անմեղ>ամմէղ. անբախտ>ամբախտ:

Գրաբարյան բառասկզբի յ-ն, որպես կանոն, վերածվել է հ-ի. ինչպես՝

յաղթել>հախտել, յաչող>հաչօռ, յիսուն>հիցցուն, յույս>հույս:

Ինչպես արդեն նշել ենք, բառավերջի այ երկբարբառի յ-ն խոսվածքում ընկնում է. օրինակ՝ տղայ>տըղա, փեսայ>փէսա, սատանայ>սադանա:

Ր>ռ—փոփոխությունն առկա է մի շարք բառերում. ինչպես՝ արծիւ>առծիվ, արձակել>ռ առզըգ՛ել, արջ>ռ առջ, արտ>ռ առդ, դուրս>դ՛ուռս, մարմար>մառմառ, ոսկր>օսկոռ, օրհնել>օռհնել, օրհնանք>օռհնանք և այլն:

Ինչպես հայերենի այլ խոսվածքներում է. Հախվերիսի խոսվածքում ևս նկատվում են բաղաձայնների ետևառաջության, անկման հավելման դեպքեր. ինչպես՝ ավլել>ալվել, սկեսուր>կ՛եսուր, սկեսրայր>կ՛եսրար, աշխարհ>աշխար, խոնարհ>խոնար, սանր>սանդըր, սանր>սանդըր, ծանր>ծանդըր:

## ФОНЕТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ АХВЕРИССКОГО ГОВОРА

ЛИЗА БАБАЯН

### Резюме

В говоре села Ахверис Игдирского района помимо гласных и согласных фонем, общих с литературным языком, имеются также палатальный ա (ա), дифтонг ուօ, звонкие придыхательные բ‘, գ‘, դ, ձ‘, ջ‘, звонкий придыхательный հ‘, палатализованные заднеязычные գ‘, կ‘, ք‘. Этот говор принадлежит к группе диалектов, имеющих трехрядную систему консонантизма (со звонкими придыхательными).